Կարբիի Վ. Թեքեյանի անվան միջնակարգ դպրոց

Երգչախմբի տարեկան ծրագիր (տարրական և միջին դպրոց)

Ժամաքանակ – շաբաթական 2 ժամ

Տարեկան - 68 ժամ

Բացատրագիր

Երգչախումբը համարվում է արտադասարանական գործունեության կարևոր տեսակներից մեկը։Երգչախմբի պարապմունքները նպաստում են սովորողների գեղագիտական ճաշակի զարգացմանը և առարկայի դասավանդման ընթացքում ձեռք բերած գիտելիքների և հմտությունների ամրապնդմանը։Երգչախումբը նպաստելու է,որպեսզի աշակերտները կարողանան երգել խմբով, մաքուր ինտոնացիայով,ունենան անսամբլային զգացողություն։Երգչախումբը նպաստելու է,որպեսզի խորանան և իմաստավորվեն երեխաների սերը հայրենիքի և իր ժողովրդի նկատմամբ։Մանկական երգչախմբի հիմնական նպատակն է սեր առաջացնել դեպի երաժշտությունը։

Նպատակները

- ներկայացնել երգչախումբը,որպես արտադասարանական գործունեության տեսակ։

- ձևավորել և զարգացնել անսամբլային երգելու կարողությունը(միաձայն,բազմաձայն)։Ձևավորել երաժշտական ճաշակ,լսողության և ռիթմի զարգացում։

- նպաստել ճիշտ կատարողականությանը՝ ինտոնացիոն մաքուր երգեցողություն,ճիշտ շնչառություն,առոգանություն,անսամբլային զգացողություն և մելիզմատիկա։

- արժևորել երգչախմբի դերը հանրակրթական դպրոցում,մշակույթային բազմազանությունը նպաստելու է սովորողի ընդհանուր զարգացմանը։

Խնդիրները

- Ստեղծել երաժշտական հարուստ միջավայր։
- Աշխատանքներ տանել ածակերտների երգչախմբին ներգրավելու համար։Անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուրի հանդեպ։
- Ուշադիր լինել,որպեսզի չվնասվի մասնակիցների բնական և երգեցիկ ձայնը։

- Հաճախակի կազմակերպել միջոցառումներ,որտեղ մասնակցություն ցուցաբերելով երգչախումբը կկարողանա հասնել խմբային բազմաձայն երգեցողության կատարելագործմանը։

«Երգչախումբ» արտադասարանական խմբակ ունենալու նպատակն է երեխաներին ավելի մոտեցնել մեր ազգային,ժողովրդական և դասական երաժշտությանը,նրանց մեջ զարգացնել բազմաձայն երգեցողությունը և միասին երգելու կարողությունը։

Երգչախումբ ունենալու նպատակն է նաև երեխաների մեջ զարգացնել երաժշտական լեզվամտածողությունը և արտահայտչականությունը։

Հիմնական խնդիրն է համարվում ծրագրում ներառել տարատեսակ երգեր՝ դասական, ժողովրդական,աշուղական,կոմպոզիտորական։

Երգչախմբի բովանդակությունը տարբերվում է ընդհանուր անցկացվող դասաժամերից։Պարապմունքները սկսվում են ձայնավարժություններով,տեքատի ծանոթացումով։Սովորեցնում ենք միասին երգել(ունիսոն),ծանոթացնում ենք տերմինաբանությանը,շղթայական շնչառությանը։Այս ամենից հետո պատկերացում են կազմում թե ինչ է բազմաձայն երգեցողությունը։

Ծրագրում ներառում ենք՝
Ռ.Պետրոսյանի,Կոմիտասի,Մ.Եկմալյանի,Ռ.Ամիրխանյանի ինչպես նաև այլ ազգերի երգեր՝ երեխաների մեջ հետաքրքրություն առաջացնելու համար։

Երգչախմբից ակնկալում եմ ունենալ բազմաձայն մաքուր երգեցողություն։

Խմբի պարապմունքները կնպաստեն դպրոցում անցկացվող բազմաբնույթ միջոցառումների երաժշտական համարների գեղեցիկ ներկայացմանը։

N	ԹԵՄԱ	ՆՊԱՏԱԿ, ԽՆԴԻՐՆԵՐ	ԺԱՄ	ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ
1.	Ռ. Պետրոսյան - <<Աստղիկների երգ>>	սովորել ձայներն առանձին, աշխատել վոկալ երգեցողության վրա	4	երգը կատարել ամբողջությամբ, երկձայն, դաշնամուրի նվագակցությամբ
2.	Ռ.Պետրոսյան <<Մենք թոռներն ենք Մաշտոցի>>	ծանոթացնել երգին, սովորել ձայներն առանձին, աշխատել երգի բնույթի վրա	4	երգը կատարել ամբողջությամբ, երկձայն, դաշնամուրի նվագակցությամբ
3.	Ռ.Պետրոսյան- <<Ճանճը կարագում>>	ծանոթացնել երգին, աշխատել սոպրանո և ալտ ձայնաբաժինների վոկալ երգեցողության վրա	4	երգը կատարել ամբողջությամբ, պահպանելով երգի բնույթն ու երկձայն երգեցողության առանձնահատկությունները
4.	Կոմիտաս – <<Խնկի ծառ >>	ծանոթացնել երգին սովորել գրագետ երգել միաձայն	4	երգը կատարել ամբողջությամբ, պահպանելով միաձայն a capella երգեցողությունը
5.	Ռ. Ամիրխանյան - <<Նոր Երևան >>	Ծանոթացնել երգին,աշխատել վոկալ երգեցողության վրա	4	երգը կատարել ամբողջությամբ, երկձայն, դաշնամուրի նվագակցությամբ

6.	Կոմիտաս - <<Առնեմ էրթամ իմ յարը >>	ծանոթացնել երգին,սովորել գրագետ երգել երկձայն	4	երգը կատարել ամբողջությամբ, պահպանելով երկձայն a capella երգեցողության առանձնահատկություն ները
7.	Կոմիտաս - <<Իմ Չինարի յարը >>	ծանոթացնել երգին սովորել գրագետ երգել երկձայն	4	երգը կատարել ամբողջությամբ, պահպանելով երկձայն a capella երգեցողության առանձնահատկություն ները
8.	Էդ. Հովհաննիսյան- <<Երևան-Էրեբունի >>	սովորել ձայներն առանձին, աշխատել վոկալ երգեցողության վրա	4	երգը կատարել ամբողջությամբ, պահպանելով երկձայն երգեցողության առանձնահատկություն ները
9.	<<Amazing Grace >>	ծանոթացնել երգին, աշխատել սոպրանո և ալտ ձայնաբաժինների վոկալ երգեցողության վրա, կարողանալ լսել մեներգչին	4	երգը կատարել ամբողջությամբ, պահպանելով երկձայն a capella երգեցողության առանձնահատկություն ները
10.	Ռ. Պետրոսյան – <<Առավոտը ով բերեց>>	սովորել ձայներն առանձին, միացնել 2 ձայներն իրար	4	երգը կատարել ամբողջությամբ, պահպանելով երկձայն a capella երգեցողության առանձնահատկություն ները
11.	Ռ.Ամիրխանյան -<<Թե մանկությունն արար աշխարհի>>	ծանոթացնել երգին, աշխատել սոպրանո և ալտ ձայնաբաժինների վոկալ երգեցողության վրա	4	երգը կատարել ամբողջությամբ, երկձայն, դաշնամուրի նվագակցությամբ

12.	Կոմիտաս- <<Անձրևն եկավ >>	ծանոթացնել երգին սովորել գրագետ երգել երկձայն	4	երգը կատարել ամբողջությամբ, պահպանելով երգի բնույթն ու երկձայն a capella երգեցողության և Կոմիտասյան երգերի առանձնահատկություն ները
13.	С.Екимов <<Танго мухи>>	ծանոթացնել երգին, աշխատել սոպրանո և ալտ ձայնաբաժինների վոկալ երգեցողության վրա, կարողանալ լսել մեներգչին	4	երգը կատարել ամբողջությամբ, երկձայն, դաշնամուրի նվագակցությամբ
14.	Ս. Լուսինյան- <<Ազատ Հայաստան>>	սովորել ձայներն առանձին, միացնել ձայները փոքր հատվածներով աշխատել վոկալ երգեցողության վրա	4	երգը կատարել ամբողջությամբ, երկձայն, դաշնամուրի նվագակցությամբ
15.	Ռ. Պետրոսյան - <<Հայրենիքը մեր >>	ծանոթացնել երգին, երգել ձայներն առանձին, ձայները փոքր հատվածներով միացնել	4	երգը կատարել ամբողջությամբ, երկձայն, դաշնամուրի նվագակցությամբ
16.	Ռ. Պետրոսյան - <<Հայրենյաց երկիր >>	ծանոթացնել երգին, երգել ձայներն առանձին, ձայները փոքր հատվածներով միացնել, աշխատել վոկալ երգեցողության վրա	4	երգը կատարել ամբողջությամբ, պահպանելով երկձայն երգեցողության առանձնահատկություն ները
17.	Ռ. Պետրոսյան - <<Հրաժեշտ դպրոցին>>	սովորել ձայներն առանձին, միացնել 2 ձայներն իրար	4	երգը կատարել ամբողջությամբ, պահպանելով երկձայն երգեցողության և երգի բնույթն ու առանձնահատկություն ները:

Վերջնարդյունքներ

Խմբակի անդամները կկարողանան՝

- Երգել մենակ,խմբով,նվագակցությամբ և առանց դրա։
- Երգերը կատարեն ճիշտ շնչառությամբ,առոգանությամբ,մաքուր ինտոնացիայով,հստակ ռիթմով։
- Վերլուծեն ստեղծագոր՛ությունը և ցուցաբերեն ճիշտ հուզական արձագանք։
- Կարողանան տարբերակել հոգևոր,դասական և ժամանակակից երգերը։